«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Առարկան՝ Հայոց պատմություն

Հետազոտող ուսուցիչ՝ Մերի Շիրոյան

Ուսումնական հաստատություն՝ <<ՀՀ Արարատի մարզի Մարմարաշենի Անդրանիկ Բարությանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. 3

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ. 5

ԳԼՈՒԽ 1

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 7

ԳԼՈՒԽ 2

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 12

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ. 18

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ. 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին տարիներին կրթության բովանդակության և նպատակների յուրացման առումով հսկայածավալ նորարարություններ և առաջարկություններ են արվել տարբեր երկրների և միջազգային կրթական կառույցների կողմից, մշակվել և ներդրվել են ուսումնադաստիարկչական աշխատանքների կազմակերպման առավել արդյունավետ եղանակներ, սովորողների ուսումնական կարողությունների խթանման նոր հնարավորություններ: Մի կողմ թողնելով կրթության կազմակերպման տարբեր եղանակները՝ այս աշխատանքում ներկայացվում են պատմության դասերի ուսուցման առանձնահատկությունները՝ միջառարկայական կապեր ստեղծելիս և այդ գործընթացի ազդեցությունը սովորողների վրա:

Յուրաքանչյուր մանկավարժի խնդիրն է զարգացնել սովորողների գեղագիտական ճաշակը, հաղորդակցային ունակությունները, սովորեցնել զգալ արվեստի ստեղծագործությունների կատարելությունն ու ներդաշնակությունը, գթասիրտ, զգայուն վերաբերմունք դաստիարակել շրջապատի նկատմամբ: Այդպիսի հատկանիշների զարգացումը նշանակում է հաղորդակցում համամարդկային մշակույթին և նրա դրսևորումներին՝ գիտական հետազոտման մշակույթին, գործունեության մշակույթին, գեղագիտական մշակույթին, միջանձնային հաղորդակցման մշակույթին, վարքի մշակույթին և այլն: Ուստի մենք կանգ կառնենք Պատմություն առարկայի դասավանդման ընթացքում սովորողների մեջ արժեհամակարգի ձևավորմանը և ուսումնասիրության օբյեկտ կդիտարկենք սովորողներին:

Թեմայի արդիականությունը՝ վերջին տարիներին կրթության բովանդակության և նպատակների յուրացման առումով հսկայածավալ նորարարություններ և առաջարկություններ են արվել տարբեր երկրների և միջազգային կրթական կառույցների կողմից, մշակվել և ներդրվել են ուսումնադաստիարկչական աշխատանքների կազմակերպման առավել արդյունավետ եղանակներ, սովորողների ուսումնական կարողությունների խթանման նոր հնարավորություններ: Մի կողմ թողնելով կրթության կազմակերպման տարբեր եղանակները՝ այս աշխատանքում ներկայացնում ենք սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը Պատմության դասավանդման ընթացքում:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման էությունը պատմության դասավանդման ընթացքում:

Հետազոտության խնդիրներն են՝

1. ուսումնասիրել թեմային վերաբերող գիտաուսումնական գրականությունը,

2. բացահայտել պատմության դասավանդման արդյունավետ ուղիներն ու հնարները,

3. ուսումնասիրել սովորողների վրա թողած ազդեցությունը , արժեհամակարգի ձևավորումը պատմության և այլ առարկաների համատեղ դասավանդման ընթացքում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Հանրակրթական դպրոցի պահանջներին համապատասխան՝ այսօր մեծանում են հումանիտար առարկաների դերն ու նշանակությունը: Այս հարցին անդրադարձել են բոլոր ժամանակաշրջանների մեծ մանկավարժները: Օրինակ՝ Յան Ամոս Կոմենսկին դիդակտիկայի սկզբունքների դասակարգման մեջ առանձնացնում էր համակարգվածության և հաջորդականության սկզբունքը, որի տակ հասկանում էր դպրոցական առարկաների միջոցով սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորում : Ընդ որում՝ նա գտնում էր, որ մի քանի առարկաների կապերի միջոցով կարելի է հասնել լավագույն և առավելագույն արդյունքի: Մեծ մանկավարժը նկատում է, որ ոչ ոքի հնարավոր չէ կրթություն տալ մի որևէ մասնակի գիտության միջոցով՝ անկախ մնացած գիտություններից[1] :

Յ.Ա.Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկա» աշխատությունում նշում է, որ ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև եղած կապերը, արժեհամակարգ ձևավորում. «Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով նշանակում է ամեն ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները, այսինքն՝ ոչ միայն ցույց տալ, թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում, այլ նաև ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող: Չէ՞ որ իմանալ որևէ բան նշանակում է իրը ճանաչել իր փոխկապակցվածության մեջ և այդ իմացության արդյունքում զարգանում է սովորողների աշխարհայացքը»[2]:

Գիտելիքների համակարգը կրթության բովանդակության առանցքային բաղադրիչներից է, որը պատկերացում է տալիս պատմական իրողությունների մասին: Պատմության ուսուցման ընթացքում աշակերտները ձեռք են բերում գիտելիքների այնպիսի տարրեր, որոնցից են փաստերը, իրադարձությունները, հասկացությունները, երևույթները և այլն: Նյութն ավելի մատչելի կդառնա, եթե ստեղծենք միջառարկայական կապ և աշակերտներին ինքնուրույն գործելու հնարավորություն տանք: Ցանկացած ուսուցիչ պետք է իմանա սովորողին ներկայացվող ընդհանրական պահանջների համակարգը՝ ըստ «Հանրակրթության պետական չափորոշչի»: Չափորոշիչը նորից վերընթերցելուց հետո, կարող ենք վստահորեն ասել, որ առարկաների ընթացքում դասավանդվող նյութը ապահովում է հանրակրթության առջև դրված բազմաթիվ խնդիրների լուծման, աշխարհի միասնական ընկալման, պրոբլեմների լուծման ընդհանրական մոտեցման հարցը, ինչպես նաև աճող սերնդի համակողմանի ու ներդաշնակ զարգացման հարցը:

Աճող սերնդի համակողմանի ու ներդաշնակ զարգացման գաղափարը հետաքրքրել է նաև ֆրանսիացի լուսավորիչ- փիլիսոփաներ Կ. Հելվեցիուսին, Դ. Դիդրոյին և ուրիշներին: Նրանք մարդու համակողմանի ու ներդաշնակ զարգացման պահանջի մեջ առանձնացրին հատկապես մտավոր և բարոյական

դաստիարակության դերը, գտնելով, որ դրանք իրենց կապերի միջոցով կընդգրկեն այլ բաղադրիչներ։ Ի տարբերություն նրանց , Ժ. Ժ. Ռուսոն պահանջեց բոլոր երեխաներին տալ նաև աշխատանքային դաստիարակություն ու նրանց նախապատրաստել աշխատանքի՝ ապահովելով միջառարակայական կապը[1] :

ԳԼՈՒԽ 1

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատմության դասավանդման մեթոդիկան՝ որպես պատմական գիտելիքների դասավանդման ու դաստիարակման միջոց, մարդկությանը հայտնի է եղել դեռևս վաղ անցյալից, երբ միջցեղային կռիվների ընթացքում ցեղային ավագանին երիտասարդ ցեղերի ոգին բարձր պահելու նպատակով նրանց դաստիարակում էր պատերազմներում սխրանքներ գործած, հերոսացած ցեղակիցների օրինակով: Հետագայում, երբ ձևավորվեցին պետությունները, և հանդես եկան դասակարգերը, ունևոր վերնախավի ներկայացուցիչները տնտեսական, քաղաքական, գաղափարական առումով իրենց դիրքերը և դասային արտոնությունները ամրապնդելու նպատակով պատմական հիմնավորումների կարիք զգացին: Պատմությունը աստիճանաբար մուտք գործեց դպրոց, պատմության դասավանդման մեթոդիկան գիտական մեկնաբանության կարիք ունեցավ : Հայաստանում պատմության դասավանդման մեթոդիկայի վերաբերյալ մեզ են հասել տեղեկություններ Օղյումպ քրմից և հույն պատմիչներից, որոնք նշում են, որ Հայաստանի մեհենական դպրոցներում հունական դպրոցի նման դասավանդում էին տարբեր մեթոդներով: Քրիստոնեության ընդունումից հետո հեթանոսական սրբավայրերի, հայոց գրի ու գրականության հետ ոչնչացվեց հայ պատմամեթոդական մտքի վերաբերյալ ստեղծված ժառանգությունը: Մաշտոցի կողմից հայոց գրերի ստեղծումից հետո հայ պատմագիտական միտքը թեև թռիչքային զարգացում ունեցավ, սակայն մեթոդական մտքի վերաբերյալ տեղեկությունները շատ աղոտ են: Խոսելով իր ուսուցչի մասին՝ Կորյունը գրում է. «Ճշմարիտ ուսուցիչները իսկապես սովոր են իրենց առաքինությունները աշակերտների համար օրինակ դարձնելու»: Պատմությունը մարդու ձևավորման և կայացման խնդիր է լուծում: Պատմության դասավանդումը պատմության ուշադրության կենտրոնում է: Կարևոր է, թե ինչպես է դասավանդվում պատմությունը: Օրինակ՝ ԽՍՀՄ–ի շրջանում պատմությունը սուբյեկտիվացված էր և դոգմացված: Պատմության դասավանդման մեթոդիկայի նպատակը ներկայացված է պետության մշակած հայեցակարգում: Կրթական հայեցակարգը ձևավորվում է սահմանադրությունից: Մեթոդիկան կապված է այս փաստաթղթերի հետ: Ուսուցման նյութի բովանդակության վրա ազդում է գաղափարական կողմը:

Պատմության կրթությունն ունի նպատակներ՝ քաղաքացու դաստիարակություն, հայրենասիրություն, ազգասիրություն, փոխանցել գիտելիքներ ներկա ժամանակներում կատարվող իրողություններից, հայկական մշակութային նվաճումները համեմատել աշխարհի մշակութային նվաճումների հետ: Սովորողների աշխարհայացքի ձևավորման գործում կարևորագույն նշանակություն ունեն պատմական գիտելիքները, քանզի նրանցում է կենտրոնացած մարդկության ողջ սոցիալական փորձը, որը անհրաժեշտ է արդի բարդ ու հակասական իրադարձությունները հասկանալու համար :

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ Պատմական գիտելիքների միջոցով հնարավոր է՝

1. ձևավորել պատկերացումներ պատմական իրականության մասին,

2. ձևավորել մարդկային հասարակության զարգացման գիտական պատկերը,

3. ճանաչել ժամանակակից հասարակությունը,

4. անձի ձևավորումը,

5 . ձևավորել արժեքային համակարգ:

Պատմական իմացության մեթոդաբանությունը ներառում է գիտելիքներ պատճառահետևանքային կապերի, պատմական զարգացման օրինաչափությունների մասին, ինչպես նաև պատմական նյութերի հետ աշխատելու կարողություններ: Հմտություններին և կարողություններին տիրապետելը աշակերտների ուսումնառության արդյունավետության բարձրացման կարևոր միջոց է:

Այսպիսով, կարող ենք վստահորեն ասել. պատմական գիտելիքները պատմական պատկերացումների, հասկացությունների, պատմական զարգացման օրինաչափությունների և պատմական նյութի հետ աշխատելու միջոցների բարդ փոխկապվածություն է: Առավել մանրամասն քննարկենք ժամանակագրական պատկերացումների ձևավորման մեթոդիկան և պատմական փաստերի տեղադրումը տարածության մեջ՝ քարտեզի հետ աշխատելու մեթոդիկա : Ժամանակային պատկերացումների ձևավորման համար անհրաժեշտ է կենտրոնացնել աշակերտների ուշադրությունը գլխավոր փաստերի վրա, գրանցել դրանք տետրում՝ նշելով տարեթիվը: Կարևոր նշանակություն ունեն ժամանակագրական աղյուսակները: Աղյուսակը կազմվում է աշակերտական տետրի վերջին 5–6 էջերում: Էջը կիսվում է 2 մասի, առաջինում նշվում է տարեթիվը, երկրորդում՝ իրադարձությունը: Այսպիսի գրառումները նպաստում են նյութի կրկնությանը և գիտելիքների ամրապնդմանը: Պատմական տարեթվերի հետ աշխատելիս օգտակար է աշխատանքը գրատախտակի հետ: Ընդհանրապես ընդունված է համարել, որ յուրաքանչյուր դասի գրատախտակին պետք է նշված լինի դասի թեման, պլանը,

հիմնական հասկացությունները, տարեթվերը, հարցերը: Տարեգրության ուսուցման ժամանակ ուսուցիչը կարող է ստեղծել այնպիսի իրադրություններ, որ աշակերտները տրամաբանելով հիշեն տարեթվերը: Դա հնարավոր է աղյուսակներ կամ խնդիրներ կազմելու և լուծելու միջոցով: Օրինակ՝ կարելի է առաջադրել հարց, թե այսինչ իրադարձությունը տեղի է ունեցել .... տարի առաջ, ուրեմն ո՞ր թվականին է դա կատարվել: Գիտելիքների ստուգման համար կարելի է հանձնարարել շարադրություն՝ արաջարկելով ոչ թե թեմա, այլ տարեթվեր: Տարեթվերը հնարավոր է զուգակցել աշխարհագրական տերմինների, անվանումների, պատմական գործիչների անունների, այլ հասկացությունների հետ: Արդյունավետ հանձնարարություն համարվում է համեմատական սինխրոն աղյուսակների կազմումը: Դա թույլ է տալիս համեմատելով իրադարձությունների տարեթիվը և տևողությունը, կատարել եզրակացություններ դրանց օրինաչափությունների և առանձնահատկությունների վերաբերյալ : Պատմության դասին կարելի է կիրառել 2 տեսակի սինխրոնիզացիա՝ տարեթվերով և իրադարձություններով: Լարելի է.

1. Տարեթիվը գրել քարտի կամ գրատախտակի վրա – աշակերտները պատասխանը նշում են տետրերում:

2. Նշել որևէ իրադարձություն – աշակերտները գրում են տարեթիվը:

3. Համադրել նշված հանձնարարությունները:

Գիտելիքների ստուգման ձևերից են թեստերը: Նրանց կիրառումը օգտակար է տարեթվերով հագեցած թեմաների ուսուցման ժամանակ: Առաջադրանքները բազմազան են: Կարելի է առաջարկել համադրած տեղադրել մի քանի պատմական փաստեր և տարեթվեր: Կարելի է թվարկել մի քանի պատմական փաստ կամ իրադարձություն՝ դիմացը նշելով մի քանի տարեթիվ, և առաջարկել ընդգծել միակ մեկ ճիշտը, կարող է նշվել ուղղակի փաստը՝ պահանջելով որոշել տարեթիվը: Ժամանակային պատկերացումների ձևավորման հարցում կարևոր է սովորեցնել տարեթվեր մտապահելը:

Կարելի է նշել երեք մեթոդ.

1. գիտակցված մտապահում,

2. մտապահել՝ հենվելով որոշակի կլոր թվերի վրա,

3. միաժամանակ տեղի ունեցած իրադարձությունները զուգահեռ նշել տետրում: Զուգահեռության սկզբունքը կարելի է կիրառել որոշակի պարբերությամբ տեղի ունեցած փաստերի դեպքում:

Մտապահելու մեթոդներից է ասոցիատիվ հիշելու մեթոդը: Օգտագործվում է մեխանիկական հիշողության մեթոդը, որի ժամանակ օգտակար են խաղերը, աղյուսակները, քարտերը:

Պատմական փաստերի տեղադրումը տարածության մեջ:

Քարտեզի հետ աշխատելու մեթոդիկա Պատմական շատ իրադարձություններ հաճախ ավելի հեշտ յուրացվում են աշխարհագրական կամ տարածքային պայմանների առնչությամբ: Տեղի, կլիմայի, գետերի, ծովերի, բնապաշարների մասին տեղեկությունները նպաստում են փաստերն ու իրադարձությունները հիշելուն: Կոնկրետ տարածքին և աշխարհագրական միջավայրին փաստերի համադրումը կոչվում է լոկալացում: Այս մեթոդի կիրառումը ենթադրում է պատմական քարտեզների օգտագործում: Աշխարհագրական քարտեզներից դրանք տարբերվում են նրանով, որ կենտրոնացված են սոցիալ–տնտեսական, քաղաքական, մշակութային տեղեկությունների վրա: Պատմական քարտեզները լինում են՝ թեմատիկ, ակնարկային, պլան–քարտեզներ և սխեմատիկ քարտեզներ: Ակնարկային (ընդհանուր) քարտեզները արտացոլում են որևէ պատմական գործընթաց, օրինակ՝ «Եվրոպան XVII դարում»: Թեմատիկ քարտեզը կենտրոնացված է լոկալ, որոշակի տարածքում կատարված երևույթ կամ իրադարձություն, օրինակ՝ «Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումները»: Կոնկրետ իրադարձությունները կարող են ներկայացվել սխեմատիկ կամ պլան–քարտեզների ձևով (Ստալինգրադի ճակատամարտի սխեմա–քարտեզ): Այս քարտեզները կազմում են հատուկ պայմանական նշաններով (սլաք), իսկ պլան–քարտեզներում օգտագործվում են նկարներ, ապլիկացիաներ և այլն: Դասի ժամանակ ուսուցիչը պետք է ծանոթացնի աշակերտներին քարտեզին, բացատրի պայմանական նշանները: Միշտ պետք է հիշել, որ աշխատանքը քարտեզի հետ պարտադիր զուգակցվում է ցուցադրությամբ: Դրա համար պարտադիր է ցուցափայտը: Քաղաքները, ճակատամարտի վայրերը ցույց են տալիս կետով, գետերը՝ ըստ հոսանքի, պետության սահմանները՝ ամբողջ երկարությամբ: Սահմանները ցույց տալու ժամանակ ցանկալի է նշել հարևան պետությունները, երկրները: Տարածությունների մասին պատկերացումներ ստեղծելու համար արդյունավետ է կազմակերպել՝

1. աշխատանք ուրվագծային քարտեզի հետ,

2. աշխատանք ինքնաստեղծ ուրվագծային քարտեզների հետ, որը կարող է պատկերվել գրատախտակի, թղթի վրա:

Պատկերները գծվում են նյութի շարադրանքին զուգահեռ: Ընթացքում կարելի է օգտագործել նաև ապլիկացիաները, պայմանական նշանները: Պետք է հիշել, որ քարտեզներն ապահովում են ոչ միայն պատմական երևույթների տեղադրումը տարածության մեջ, այլև պատմական իրադարձությունների մասին գիտելիքների աղբյուր են, ուսումնասիրած նյութի ընդհանրացման միջոց, աշակերտների

գիտելիքների ամրապնդման և ստուգման ձև: Դրա համար էլ քարտեզը անհրաժեշտ է յուրաքանչյուր դասի, բայց պարտադիր է դասի թեմային համապատասխան:

Պատմական իրադարձությունների ուսումնասիրությունը քարտեզների միջոցով պահանջում է մշակել հատուկ նպատակաուղղված հարցեր .

1. Կոնկրետ փաստ վավերացնող (Ցո՛ւյց տվեք Հին Եգիպտոսի տարածքը),

2. Մեկնաբանություն պահանջող (Ցո՛ւյց տվեք այն գետը, որի ջուրը Հապի աստվածն է լցնում):

3. Պատմական քարտեզը այլ աղբյուրների օգտագործմամբ վերլուծելու նպատակով (համեմատել նոր և նորագույն շրջանների աշխարհի քաղաքական քարտեզները, մեկնաբանե՛ք տարածքային և քաղաքական փոփոխությունները):

4. Հիմնախնդիրների լուծում պահանջող.

Աշակերտները քարտեզների վերաբերյալ պետք է գիտենան, որ.

1. քարտեզի անվանումը համապատասխանում է թեմայի հիմնական բովանդակությանը,

2. թեմատիկ պատմական քարտեզները գծագրվում են աշխարհագրական հիմքի վրա, 3. պատմական քարտեզը ներկայացնում է անցյալը,

4. քարտեզն ունի իր լեգենդը, որը մեկնաբանում է պայմանական նշանները,

5. միևնույն քարտեզի վրա կարող են արտահայտված լինել իրար շարունակող կամ իրար հետ կապված իրադարձություններ:

Աշակերտները քարտեզների վերաբերյալ պետք է կարողանան.

1. նշել և անվանել աշխարհագրական տարածքը,

2. ընկալել մասշտաբը,

3. համեմատել վայրերի հեռավորությունը և տարածքի չափերը հայտնի փաստերի հետ (մեծ է կամ փոքր է մեր հանրապետությունից, հեռու կամ մոտ է մեր գյուղից (քաղաքից մինչև մայրաքաղաք),

4. օգտվել լեգենդով բնորոշած պայմանական նշաններից,

5. բանավոր մեկնաբանել քարտեզի բովանդակությունը[1]:

Ինչպես տեսանք պատմությունը սերտ կապի մեջ է աշխարհագրության հետ: Արդյունավետ է կապեր ստեղծել նաև գրականության հետ:

Հաջորդ գլխում ներկայացնենք հետազոտության արդյունքում առանձնացրած արդյունավետ մեթոդների մասին, որոնք գործի դնելով կարողացել ենք հասնել հաջողության։,

ԳԼՈՒԽ 2

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

Առարկայի դասավանդումը, նոր նյութի հաղորդումն անհնար է պատկերացնել առանց ուսուցման մեթոդների։ ՈՒսուցման մոդելների շարքում առանձնացվում են երեքը. պասիվ, ակտիվ և ինտերակտիվ։ Ինտերակտիվ ուսուցման յուրահատկությունն այն է, որ կազմակերպում է այնպիսի պայմաններ, որոնց առկայությամբ բոլոր սովորողները ակտիվորեն փոխգործակցում են։ Ինտերակտիվ ուսուցման կազմակերպումը ենթադրում է կենսական իրավիճակների մոդելավորում, դերային խաղերի օգտագործում, հարցերի և խնդիրների ընդհանրացնող հետևություն հանգամանքների և իրավիճակների վերլուծության հիման վրա , տեղեկատվական հոսքերի ներթափանցում գիտակցության մեջ , որը դրդում է ակտիվ գործունեության։ Ուսուցչին մնում է ստեղծագործել, որոնել կիրառել և գտնել ուսուցման իդեալական տարբերակ։ Պետք է մշտապես հաշվի առնել այն հանգամանքը , որ անհատի բազմակողմանի և ներդաշնակ զարգացումն է հենց ուսուցման գլխավոր նպատակներից մեկը։

Պ. Պոդլասին մի առիթով ասել է. «Մանկավարժական տեսությունը վերացություն է։ Նրա գործնական կիրառումը՝ միշտ բարձր արվեստ»[1] և ուրեմն փորձենք բացահայտել գործնականորեն ուսուցման միջոցների արդյունավետությունը։ Առաջնորդվելով ուսուցման ինտերակտիվ միջոցներով կիրառենք մի շարք մեթոդներ և գրանցենք արդյունքները։ Մենք ընտրում ենք ինտերակտիվ ուսուցումը, քանի որ ինտերակտիվ ուսուցման մեթոդները ենթադրում են օգտագործել այնպիսի մեթոդների համակարգ, այնպիսի հետաքրքիր հնարներ, որոնց ժամանակ ուսուցիչը չի մատուցում պատրաստի գիտելիքներ, այլ սովորողների կողմից գիտելիքի ինքնուրույն ձեռք բերում՝ ակտիվ ճանաչողական գործունեության ընթացքում։ Ինտերակտիվ ուսուցման մեթոդներ նշանակում է ուսուցում գործունեության մեջ։ Լ. Ս. Վիգոտսկին ձևակերպել է օրենք, որտեղ ասվում է, որ ուսուցմանը հետևում է

զարգացումը , իսկ անձը զարգանում է գործունեության մեջ։

Պատմության դասավանդման ընթացքում արժեքային համակրգի ձևավորման արդյունավետ հնար ենք համարում «կենտրոններով աշխատանքը». իհարկե մեզ օգնության են հասնում պաստառները.

Ստեղծում ենք 4-5 հոգուց բաղկացած խմբեր: Խմբերը ստանում են տեքստը և մոտենում համապատասխան անվանումներով կենտրոններին: /Խմբերում մասնակիցների ներգրավումը և խմբին համապատասխան կենտրոն ուղղորդելը կարող է լինել ինչպես նպատակային՝ համագործակցություն, որոշակի աշխատանքներում կարողությունների և հմտությունների խորացում, այնպես էլ պատահականության սկզբունքով/:

Ընտրեցինք հետևյալ կենտրոնները.

• հետազոտողների կենտրոն

• ստեղծագործողների կենտրոն

• գրավոր աշխատանքի կենտրոն

• բացահայտողների կենտրոն

Սովորողներին հնարավորություն տվեցինք ընտրություն կատարել: Մենք գտնում ենք, որ աշխատանքն այդպես արդյունավետ կլինի:

Արդյունքում սովորողները սիրով մասնակցեցին այս խմբային աշխատանքին, ցուցաբերեցին ակտիվություն, կարողացան պատասխանել մի շարք հարցերին, զատել կարևորը երկրորդականից , օգնել միմյանց, կատարել ինչպես ինքնուրույն այնպես էլ խմբային աշխատանք:

Այս մեթոդի կիրառման ընթացքում մենք կապ հաստատեցինք միանգամից երեք առարկաների միջև. պատմություն-գրականություն,պատմություն-հայոց լեզու, պատմություն-աշխարհագրություն:

11-րդ դասարանում ուսումնասիրվող նյութ է «Սյունիքի հայկական իշխանությունը»:

Հետազոտողների կենտրոնն ուսումնասիրում է դասի նյութը և ներկայացնում այն հակիրճ. անդրադառնալով այն հարցին, թե ինչի՞ մասին է նյութը:

Ստեղծագործողների կենտրոնը գրում է փոքրիկ շարադրություն Դավիթ Բեկի մասին, ուսումնասիրելով Դավիթ Բեկի մասին գրական նմուշը:

Գրավոր աշխատանքի կենտրոնը քարտեզի միջոցով ներկայացնում է Դավիթ Բեկի ծավալած գործունեությունը, իսկ բացահայտողների կենտրոնը ներկայացնում է Ապստամբության ավարտը:

Ահա այս աշխատանքի միջոցով մենք կարողացանք և՛ ստեղծել միջառարկայական կապեր և՛ , իհարկե, տեսանք , որ այդ մեթոդը բավականին արդյունավետ է կիրառել նոր նյութն ուսումնասիրելիս:

Հաջորդ մեթոդը, որը նույնպես բավականին արդյունավետ է «Գուշակությունն» է . ինչպես ենք այն կիրառում և ստեղծում միջառարկայական կապեր:

Սովորողների հետաքրքրությունը խթանելու նպատակով կարելի է նյութի հիմնական կարևոր հասկացությունները կամ վերնագիրը թերթիկների վրա գրել, կտրատել առանձին բառերի և պահել դասասենյակում՝ աչքից հեռու տեղերում: Դասը սկսելուց առաջ առաջարկել սովորողներին գտնել դրանք և համադրելով ստանալ վերնագիրը կամ գլխավոր միտքը: Կարելի է առաջարկել նաև ստացածը կարդալով գուշակել՝ ինչի մասին է դասը, կարծիքները լսել և առաջարկել ուսումնասիրել բուն դասանյութն ու ընդհանրություններ կամ տարբերություններ գտնել գուշակածի ու դասանյութի միջև: Կարելի է նաև մտածողության հմտություններ զարգացնելով իրականացնել այս հնարը: Օրինակ՝ կարող ենք առանձին թղթերի վրա գրել «կռիվ», «պատերազմ», «տարակարծություն», «անհամաձայնություն» բառերը և աշակերտներին առաջարկել գտնել այն հասկացությունը, որը միավորում է այս բառերը, բայց բառը պետք է լինի անպայման հասարակ գոյական, արտահայտված լինի եզակի թվով, հոլովվի, ունենա նաև հոգնակի թիվ: Պատասխանն է՝ կոնֆլիկտը: Ահա այսպես մենք կարող ենք պատմության ցանկացած դաս սկսել՝ կապեր հաստատելով նաև հայոց լեզվի հետ և միաժամանակ կրկնելով այդ առարկայի նյութը: Իսկ գուշակության արդյունքում նրանք հեշտությամբ կկարողանան մտապահել նաև պատմության դասի բանալի բառերը: Այս պարագայում արդեն մենք թղթերի վրա կգրենք հենց բանալի բառերը և կուղղորդենք դրանք գուշակելուն:Կարևոր է նաև ուսուցիչների համագործակցությունը և թեմաների համդրումը, ինչը մենք արեցինք այս թեման ներկայացնելուց առաջ:

Հաջորդ արդյունավետ մեթոդը բանավեճի մեթոդն է, բայց մենք ընտրել ենք հենց գրավոր բանավեճի մեթոդը:

Այս մեթոդը նպաստում է սովորողների համագործակցային կարողությունների ձեռքբերմանը: Այն բանավեճի մեթոդի գրավոր տարատեսակն է: Մի կողմից

ապահովում է բոլոր սովորողների ակտիվությունն ու միմյանց միջև ակտիվ փոխներգործությունը, մյուս կողմից էլ ապահովում է բանավեճի անցկացման յուրահատուկ՝ ‘խիստ բարեկիրթ, անաղմուկ’ միջավայր և իհարկե հիանալիորեն կապ է ստեղծում առարկաների միջև: Գրավոր շրջանաձև բանավեճը նպաստում է գրավոր խոսքի զարգացմանը:

Նախնառաջ անհրաժեշտ է լսարանը բաժանել 4 խմբի՝ ստեղծելով ասենք, կարմիրների, կապույտների, կանաչների և դեղինների խմբեր: Խմբերի թիվը պետք է համապատասխանի այն գաղափարների, պնդումների թվին, որոնց շուրջ պետք է կազմակերպվի բանավեճը:

Ներածություն. Սովորողներին տեղեկացնել, որ նրանք անդրադառնալու են հասարակությանը խիստ հուզող կամ կարդացած ստեղծագործությունից մի քանի հրատապ և լուրջ հարցերի, ձևակերպելու են իրենց տեսակետները վերջիններիս վերաբերյալ, գործնականում կիրառելով շատ հետաքրքիր մեթոդ, որը կոչվում է ‘Գրավոր շրջանաձև բանավեճ’:

Սովորողների խմբերին բաժանել մեկական մեծ թղթեր, որոնցից յուրաքանչյուրի վրա, ամեն խմբի գույնին համապատասխան գույնով, մեծ տառերով գրված են մեկական գաղափար, պնդում կամ նախադասություն:

Խմբերին տալ իրենց ընտրած գույնին համապատասխան մեկական մատիտ:

Խմբերին առաջարկել կարդալ իրենց նյութերը, քննարկել այն և իրենց վերաբերմունքը գրավոր շարադրել հարցի տակ: Պետք է հետևել, որ օգտագործվի թղթի 1|4 մասը: Մյուսներին էլ գրելու տեղ պետք է թողնել:

Ժամանակը լրանալուց հետո՝ խմբերին հրահանգել դադարեցնել քննարկումները և ժամացույցի սլաքի ուղղությամբ միմյանց փոխանցել իրենց թղթերը (առաջին պտույտ):

Յուրաքանչյուր պտույտի հետ պետք է ավելացնել աշխատանքի համար տրվող ժամաքանակը:

Խմբերից յուրաքանչյուրին առաջարկել ծանոթանալ նոր պնդման հետ, կարդալ նախորդ խմբի գրած դիտարկումը և պատասխանել ու վերաբերմունք ձևակերպել ոչ թե պնդման, այլ նախորդ խմբի ձևակերպման վերաբերյալ:

Ժամանակը լրանալուց հետո խմբերին հրահանգել դադարեցնել քննարկումները և ժամացույցի սլաքի ուղղությամբ նորից փոխանցել իրենց թղթերը (երկրորդ պտույտ) :

Խմբերից յուրաքանչյուրին առաջարկել ծանոթանալ նոր պնդման հետ, կարդալ նախորդ խմբերի գրած դիտարկումները (թվով 2) և պատասխանել ու վերաբերմունք ձևակերպել ոչ թե պնդման, այլ նախորդ խմբերի ձևակերպումների վերաբերյալ:

Ժամանակը լրանալուց հետո խմբերին առաջարկել ժամացույցի սլաքի ուղղությամբ կրկին միմյանց փոխանցել թղթերը (երրորդ պտույտ):

Խմբերին առաջարկել կարդալ (նոր թղթի) հիմնական պնդումը, ծանոթանալ պնդման վերաբերյալ նախորդ խմբերի (3 խումբ, 3տեսակետ) գրավոր շարադրած մոտեցումների հետ և ձևակերպել ու գրել սեփական մոտեցումը:

Ժամանակը լրանալուց հետո խմբերը չորրորդ անգամ են միմյանց փոխանցում թղթերը, որից հետո աշխատանքները վերադառնում են հիմնական խմբերին:

Խմբերը կարդում են պնդման վերաբերյալ նախորդ խմբերի գրավոր շարադրած մտքերն ու մոտեցումները, քննարկում և ձևակերպում իրենց խմբի վերջնական տեսակետը:

Աշխատանքների ներկայացում: Խմբերը ներկայացնում են իրենց վերջնական տարբերակները՝ անդրադառնալով նաև մյուս խմբերի տեսակետներին: Շեշտադրվում է նաև, թե հատկապես ինչն է փոփոխվել իրենց մոտեցման մեջ և հատկապես որ խմբի տեսակետի ազդեցությամբ: Խմբերի կարծիքները արտացոլվում են տարբեր գույներով:

Այնուհետև կազմակերպվում է քննարկում ձևավորված տեսակետների շուրջ՝ հարց ու պատասխանի ձևով:

Մենք ընտրել էինք «Խորհրդային Հայաստանը և հայկական Սփյուռքը 1945-1991 թվականներին» թեման և կանգ առել «Ազգային զարթոնք» թեմայի վրա , նյութն ուսումնասիրվում է 9-րդ դասարանում Հայոց պատմությունից: Մշակել էինք հարցերի համալիր և յուրաքանչյուր շրջապտույտի ժամանակ խմբերից յուրաքանչյուրն անդրադառնում էր մեկական հարցի.

1. հայ գրականության մեջ ո՞ր գրողներն են անդրադարձել այս ժամանկաշրջանին և ստեղծել հիանալի գործեր.

2. ի՞նչ գիտեք Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրի մասին,

3. ինչպե՞ս աշխուժացավ ազգային կյանքը.

4. ազգային-հայրենասիրական թեմաներով արժեքավոր գրական- գեղարվեստական, պատմագիտական, մշակույթի ի՞նչ գործեր ստեղծվեցին:

Այս մեթոդի առավելությունն այն է, որ օգտվելով որոշակի գրականությունից և համացանցից սովորողները նախ պատրաստվում են բանավեճին և արդեն գիտելիքներով զինված սկսում են աշխատանքը:

Հաջորդ մեթոդը , որը հիանալի տարբերակ է միջառարկայական կապեր ստեղծելու

ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆԿԱՆԳԱՌ-ն է.

Այս հնարը խմբային աշխատանքի շնորհիվ բոլոր խմբերի հետ աշխատելու հնարավորություն է տալիս՝ծանոթանալով այլ խմբերի տեսակետներին և հավելելով սեփական տեսակետը, ստեղծելով միջառարկայական կապեր և զարգացնելով սովորողների աշխարհայացքը: Մեթոդը կիրառել ենք 10-րդ դասարանում Հայոց պատմության դասին.

- **Քայլ 1.**Դասարանը բաժանվում է խմբերի՝ըստ իր նախընտրած մեթոդի:
- **Քայլ 2.**Խմբերին առաջարկվում է նստել նախօրոք պատրաստված սեղանների շուրջ, որտեղ դրված կամ փակցված են կանգառի անունը և նյութին վերաբերող մեկ հարց:
- **Քայլ 3.**Խմբերին բաժանվում է ուսումնասիրվող նյութը, վատման և նշագրիչներ:
- **Քայլ 4.**Յուրաքանչյուր խումբ 7-8 րոպեի ընթացքում կարդում է նյութը և վատմանի վրա գրում իր հարցին վերաբերող 2-3 ընդհանրացում (վատմանը պետք է մնա այդ սեղանին):

- **Քայլ 5.**Այնուհետև յուրաքանչյուր խումբ պտտվում է ժամացույցի սլաքի ուղղությամբ և հայտնվում մյուս սեղանի մոտ, վատմանի վրա ավելացնում մյուս խմբի հարցին վերաբերող 1-2 միտք ու շարժվում առաջ:

Նկատառում. չի կարելի արդեն գրված մտքի վրա որևէ ուղղում կամ ավելացում կատարել:

- **Քայլ6.** 4 սեղաններին մոտենալուց և գրառումներ կատարելուց հետո յուրաքանչյուր խումբ վերջում հայտնվում է իր հիմնական սեղանի մոտ և 3 րոպե ծանոթանում բոլոր գրառումներին:
- **Քայլ7.**Ավարտին յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր հարցի էությունը՝ ըստ գրառումների:
- **Մենք ընտրել էինք «Հայկական քաղաքայրթության ձևավորման պատմաաշխարհագրական պայմաններ թեման»: Ապա սահմանել 4 կանգառ՝ դասարանի յուրաքանչյուր անկյունում:**
- **Առաջին կանգառ- անդրադառնալ Հայաստանի գետերին և ներկայացնել գրական նմուշներ թեմայի վերաբերյալ:**
- **Երկրորդ կանգառ- ներկայացնել Հայաստանի աշխարհագրական դիրքը:**
- **Երրորդ կանգառ- հիշել և նշել երգերի վերնագրեր նվիրված Հայաստանին, երգել դրանցից մեկ հատված**
- **Չորրորդ կանգառ- ներկայացնել փոքրիկ շարադրանք «Հայաստանն իմ տունն է » վերնագրով:**

<u>Յուրաքանչյուր խումբ գրավոր ներկայացնում է տրված հարցի</u> պատասխանը, արդյունավետ է , երբ նրանք դասին նախապես պատրաստվելու հնարավորություն են ունենում՝ առնվազն 1 օր :

Խմբերը պտտվում են ժամացույցի սլաքի ուղղությամբ՝ աշխատելով նախորդ խմբի հարցի շուրջ: Վերջում խմբերը ամփոփում են իրենց աշխատանքը՝ բարձրաձայն ներկայացնելով թե՛ իրենց, թե՛ մյուս խմբերի ներկայացրած աշխատանքները կոնկրետ իրենց բաժին հասած հարցի վերաբերյալ:

Այս մեթոդը լավագույններից է միջառարկայական կապեր ստեղծելու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ճիշտ ընտրած մեթոդն է դասի նպատակին հասնելու հաջողության գրավականը։
- «Պատմություն» առարկան սերտ կապի մեջ է «Հայոց լեզվի և գրականության», «Աշխարհագրության»,« Տեխնոլոգիայի» հետ և այդ կապի միջոցով ձևավորվում է արժեքային համակարգ , որը ամուր է և հուսալի:
- Սովորողները դասի նյութը լավագույնս են յուրացնում, երբ ստեղծում ենք միջառարկայական կապեր։
- Ինտերակտիվ ուսուցումը հնարավորություն է տալիս դասը կազմակերպել արդյունավետ։
- Սովորողների վրա դրական ազդեցություն ունեցավ մեր նպատակաուղղված, հետազոտական աշխատանքը :
- Միայն այն դեպքում կարելի է արդյունավետ և նպատակասլաց ղեկավարել համագործակցելու կարողությունների ,արժեքային համակարգի ձևավորման գործընթացը , երբ տարվող աշխատանքները կառուցված են նրանց տարիքային առանձնահատկությունների իմացության և դրանց հաշվառման հիման վրա։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Թամամյան Գ., Պատմության ուսուցման արդյունավետության մի քանի հարցեր, Եր., 1972,

Հարությունյան Վ. Խ., Յան Ամոս Կոմենսկին և նրա «Մեծ դիդակտիկան», Եր., 1970,

Հանրակրթության պետական չափորոշիչ, 2011,

Бурцева Н. М. , Межпредметные связи как средство формирования ценностных отношений, СПб., 2001,

Подласый И. П ., Педагогика (1999), *Новый курс, учебник для студ. пед. вузов,* М Владос,